

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Սուրեն ԴԱՎԹՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, ապահովագրություն, գյուղատնտեսության վարկավորում, պարենային անվտանգություն

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանում գյուղատնտեսության վարումը մեծապես պայմանավորված է ռիսկի գործոնով և հաշվի առնելով ճյուղի առանցքային նշանակությունը ազգային տնտեսության զարգացման, երկրի կենսագործունեության և պարենային անվտանգության ապահովման, բնակչության ընդհանուր կենսամակարդակի բարձրացման գործում, առանձնահատուկ նշանակություն է ստանում ագրարային ոլորտում իրականացվող պետական քաղաքականության կարևոր նպատակներից մեկի՝ հստակ մեխանիզմներ ունեցող ապահովագրական համակարգի ստեղծումը: Ապահովագրությունը, որպես տնտեսության մի շարք կարևորագույն բնագավառների զարգացման և հասարակության նորմալ կենսագործունեություն ապահովող խնդիրների լուծման արդյունավետ գործոն, շուկայական հարաբերությունների համակարգում հիմնավորել է իր կարևորությունը, դերն ու նշանակությունը: Զարգացած երկրներում ապահովագրությունը ներթափանցել է հասարակական կյանքի բոլոր բնագավառները և մարդկանց գիտակցության մեջ այն խորը արմատներ է գցել, առանց որի հասարակությունը չի պատկերացնում իր նորմալ գործունեությունը: Մարդիկ տարբեր գործոններով պայմանավորված, ապահովագրում են գրեթե ամեն ինչ՝ կյանքը, սեփականությունը, գույքը և այլն՝ ներդնելով ֆինանսական զգալի միջոցներ, գիտակցելով դրա անհրաժեշտությունը և զնահատելով ապագայում հնարավոր ռիսկի գործոնը:

Մեր երկրում, շուկայական հարաբերությունների անցման շրջանում, զուգահեռաբար սկսեցին ձևավորվել ֆինանսական շուկան և ապահովագրական համակարգը: Չնայած Խորհրդային Հայաստանում, պլանային տնտեսության համակարգում գոծում էր ապահովագրության շուկան՝ մենաշնորհային դիրք ունեցող, 1925թ. ձևավորված "Պետապ" ապահովագրական ընկերությունը, այնուամենայնիվ ներկայումս ՀՀ-ում գործող ապահովագրական համակարգը էապես տարբերվում է նախորդից, բովանդակային առումով և գործող մեխանիզմներով ավելի մոտ գտնվելով համաշխարհային գործող ապահովագրական համակարգին, որի ազդեցությունը կրելով հանդերձ դեռևս հեռու է բավարար լինելուց՝ մատուցվող ծառայությունների տեսականիով, կառուցվածքով և բազմաթիվ այլ ցուցանիշներով: ԽՍՀՄ փլուզումից

հետո ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը նպաստել են օրենսդրական դաշտի մի շարք փոփոխություններ: Ըստ այդմ՝ նշված գործընթացը ՀՀ-ում կարելի է բաժանել հինգ փուլերի:

1. 1988թ. "Կոոպերացիայի մասին" ԽՍՀՄ օրենքի ընդունում, որը վերջ դրեց ապահովագրության բնագավառում պետական մենաշնորհին: Դրան հաջորդեց 1991թ. "ՀՀ տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին" ՀՀ Նախարարների Խորհրդի որոշումը, որը սահմանում էր, որ բոլոր տեսակի ձեռնարկությունները կարող են իրականացնել լիցենզավորման ենթակա տնտեսական գործունեության միայն պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից թույլտվություն /գործունեության լիցենզիա/ ստանալուց հետո, իսկ ապահովագրական գործունեությունը լիցենզավորող պետական մարմինը ՀՀ Ֆինանսների նախարարությունն էր: Այս փուլում 1996թ. ՀՀ-ում լիցենզավորվել և գործում էին 83 ապահովագրական ընկերություններ:

2. Այս փուլը սկզբնավորվում է 1996թ. "Ապահովագրության մասին" ՀՀ օրենքի ընդունմամբ: Հատկանշական էր նաև, որ նույն թվականին ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց ապահովագրական պահուստների ձևավորման ու տեղաբաշխման, ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորման գործընթացը կանոնակարգող որոշումը: 1998թ. հաստատվեց նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը /ապահովագրության մասով՝ գլուխ 54/: Արդյունքում ՀՀ ապահովագրական շուկայում ընկերությունների թիվը զգալիորեն կրճատվեց՝ 83-ից իջնելով 20-ի:

3. ՀՀ Ապահովագրական շուկայի զարգացման երրորդ փուլի սկիզբ կարելի է համարել 2005թ. "Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին" ՀՀ օրենքի ընդունումը, որը կանոնակարգում է ՀՀ-ում ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները, այդ թվում՝ ՀՀ ֆինանսական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ կարգավորման և վերահսկողության գործառույթները ՀՀ ԿԲ-ին փոխանցելու հետ կապված միջոցառումները: Այս փոփոխության տրամաբանությունն այն էր, որ ֆինանսական կառույցների կարգավորումն իրականացվեին կենտրոնացված կարգով՝ ՀՀ ԿԲ կողմից:

4. Այս փուլը կարևորվեց 2007թ. "Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին" ՀՀ օրենքի ընդունմամբ, որին համապատասխան էլ փոփոխություններ կատարվեցին ՀՀ ապահովագրության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում:

5. ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման գործում նշանակալի դեր խաղացին 2010թ. "Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին" ՀՀ օրենքի, ինչպես նաև 2011թ. ՀՀ-ում քաղաքացիական և պետական ծառայողների համար սոցիալական փաթեթի ներդրումը, ինչը կարելի է դիտարկել որպես ՀՀ ապահովագրական շուկայի զարգացման չորրորդ փուլ: Փաստորեն, այս փուլի ընթացքում ապահովագրության դաշտ մուտք գործեցին շուրջ 550 հազար քաղաքացիներ¹:

Ապահովագրության համակարգը բարդ, բազմագործոն, ռիսկային, սակայն դինամիկ և հեռանկարային ոլորտ է, որը ներառում է մեկ ընդհանուր շղթայի բազմաթիվ օղակներ, ինչպիսիք են՝ ապահովագրողներն ու ապահովադիրները, ապահովագրական միջնորդները, վարվող քաղաքականությունն ու պահանջարկը և այլ փոխկապակցված բաղադրիչներ և տարրեր: Ապահովագրության համակարգը կապում է շղթայի երկու հիմնական օղակներին՝ ապահովագրողներին և ապահովադիրներին իրար հետ, որի արդյունքում հասարակությունում ձևավորվում է համապատասխան մոտեցում տվյալ գործընթացի հետ կապված և համակարգի զարգացումը մեծապես պայմանավորվում է վերոհիշյալ երկու հիմնական մասնակիցների արդյունավետ համագործակցությունից:

"Ապահովագրական շուկայի տնտեսագիտական բովանդակության բացահայտման համար առաջին հերթին անհրաժեշտ է դա քննարկել որպես ֆինանսական շուկայի հատված, իսկ ֆինանսական շուկայում, ինչպես հայտնի է, գործարքի առարկան փողն է, որի շուրջ էլ ձևավորվում են մնացած բոլոր հարաբերությունները: Ապահովագրական ընկերությունները, որպես ֆինանսական ինստիտուտներ, ֆինանսական շուկայից գնում են փող, որի դիմաց վճարում են իրավունքներով, այն է՝ պատահարի տեղի ունենալու դեպքում նրանք կրում են փողը վաճառողի վնասների ռիսկը, այսինքն՝ փոխհատուցում են այն"²: Ապահովագրությունն ունի երկակի դեր: Մի կողմից, ապահովագրության հիմնական ֆունկցիան է քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների գույքային շահերի պաշտպանությունը, որի դեպքում նպաստում է ներդրումների ավելացմանը նույնիսկ տնտեսական, սոցիալական վիճակի և բանկային համակարգի անկայունության, արժեթղթերի շուկայի անհրաժեշտ կարգավորման բացակայության պայմաններում: Մյուս կողմից, ապահովագրական ընկերությունները կենտրոնացնում են հսկայական ֆինանսական միջոցներ, որոնք կարող են օգտագործվել իբրև ներ-

¹ Ապահովագրության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Աշոտ Սալնազարյան և այլք, էջ 83-84::

² Նույն տեղը, էջ 80:

դրումներ, այդ թվում և տնտեսության իրական հատվածում: Ապահովագրության իրականացման տեսանկյունից, ֆիզիկական անձինք առնչվում են հետևյալ երկու խոշոր խմբերի մեջ մտնող ռիսկերի հետ.

1. սոցիալական ռիսկեր, որոնց համար սահմանվում է նվազագույն պարտադիր ապահովագրություն և որոնց կառավարումը զարգացած տնտեսություն ունեցող երկրներում իրականացվում է պետական կամ կիսապետական կազմակերպությունների կողմից: Խնդիրը վերաբերվում է այնպիսի ռիսկերին, որոնք կապված են ֆերմերային տնտեսությունների ղեկավարների և ընտանիքի մյուս անդամների հիվանդության, աշխատանքային պատահարների, կենսաթոշակային հիմնադրամի կազմավորման հետ: Այս դեպքում ապահովագրական ընկերությունները համալրում են պետության կողմից իրականացվող պարտադիր ապահովագրությունը,

2. "Տնտեսական" բնույթի ռիսկեր, որոնց գծով ապահովագրությունը պետք է իրականացվի մասնավոր ընկերությունների կողմից: Այս ռիսկերն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի.

ա/ գույքի վնասվելու դեմ ապահովագրություն,

բ/ անհատների ապահովագրություն /կյանքի ապահովագրություն/:

Գույքի վնասվելու դեմ ապահովագրությունը բաժանվում է երկու խմբի.

1. Գույքի ուղղակի վնասվելու դեմ ապահովագրություն,

2. Պատասխանատվության ապահովագրություն /գյուղատնտեսական մեքենաներ, մարդատար ավտոմեքենաներ և այլն/:

Գույքի ուղղակի վնասվելու դեմ ապահովագրությունը, գյուղատնտեսական ապահովագրության դեպքում, ընդգրկում է մասնավորապես շինությունները և նրանց պարունակությունը հրդեհից, հողամարիկներից, կարկուտից, ձյունից, բնական աղետներից տուժելու դեմ ապահովագրությունը և գյուղատնտեսական կենդանիների անկման դեմ ապահովագրությունները: Ապահովագրության այս տեսակները շատ երկրներում համարվում են ոչ պարտադիր: Ինչ վերաբերվում է բերքի ապահովագրությանը, ապա զարգացած երկրներից շատերում ապահովագրվում է միայն կարկուտի ռիսկը: Բնական այլ աղետների հետևանքով պատճառված վնասները հատուցվում են գյուղացիական տնտեսությունների և պետության համատեղ գործող հիմնադրամների կողմից (օրինակ՝ Ֆրանսիայում): Որոշ պետություններում (ԱՄՆ, Կանադա, Իսպանիա) գոյություն ունի բերքի բազմառիսկային ապահովագրության համակարգ, որը տարածվում է նաև գյուղատնտեսական կենդանիների վրա: Խոսքը վերաբերվում է յուրօրինակ կիսապետական համակարգին, որի պարագայում պետությունն ապահովում է անհրաժեշտ ֆինանսավորումը և միաժամանակ՝ հանդիսանում վերջնական վերաապահովագրողը: Որպես կանոն, այն երկրներում, որտեղ չի գործում բերքի ռիսկի

ապահովագրության համակարգը, իրականացվում են վնասների փոխհատուցում բյուջետային միջոցների հաշվին:

Գյուղատնտեսության ապահովագրության դեպքում "կարմիր թելի" պես ձգվում է այն մոտեցումը, որ "մարդու գործունը" այս պարագայում վճռո-րոշ դերակատարում ունի: Ֆերմերի գիտելիքները, հատկապես՝ իրավա-կան, մասնագիտական առումներով սովորաբար վճռորոշ դեր է խաղում վնասների չափի և դրանց վերջնական արժեքի մեծության որոշման գործում: Ավելին, ֆերմերը պետք է գերազանց տիրապետի մեր երկրի և հատկապես այն տարածաշրջանի գյուղատնտեսության առանձնահատկություններին և կանխարգելիչ միջոցառումներին որտեղ նա գործունեություն է իրականաց-նում: Ուսումնասիրությունները³ ցույց են տալիս, որ գյուղատնտեսական ապահովագրման պոտենցիալ շուկա Հայաստանում գոյություն ունի, սակայն գյուղացիական տնտեսությունների կողմից ապահովագրման պահանջը վառ արտահայտված չէ: Նկատի ունենալով, որ գյուղացիական տնտեսություն-ների գերակշռող մասը գյուղատնտեսական մթերքներ արտադրողներ են և նրանց մոտ դեռևս թույլ է ձևավորված ապահովագրության նկատմամբ պա-հանջը, ուստի ագրարային ոլորտի ապահովագրության առաջարկը ապահո-վագրական ընկերությունների կողմից պետք է կրի համապարփակ բնույթ և ընդգրկվի գյուղատնտեսության ոլորտում առկա բոլոր ռիսկերը:

Հարկ է նշել, որ կապված վերջին տարիներին անասունների շրջանում տարածված հիվանդությունների /խոզի գրիպ, հավի գրիպ և այլն/ հաճա-խականությունից և մաստաբներից, հասարակության մոտ ձևավորվում է պահանջարկ, հատկապես խոշոր անասնաբուժությամբ կամ թռչնաբուժու-թյամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների մոտ, ապահովագրա-կան գործընթացի նկատմամբ, սակայն անասունների ապահովագրության գործընթացի իրականացմանը պետք է նախորդի անասունների անձնագրա-վորման հաստատությունների կազմավորումը և գործընթացի իրականա-ցումը, որը պետք է կրի շարունակական բնույթ: Քանի դեռ այս ինստիտուտը չի ձևավորվել և ծառայել իր նպատակին, ուրեմն վաղ է խոսել անասունների մասսայական ապահովագրության գործընթացի մասին: Գյուղացիական տնտեսությունների կողմից ամենամեծ պահանջարկը դիտարկվում է բերքի ապահովագրության հանդեպ, այնինչ, բացառությամբ կարկտահարության ռիսկից, մնացածը, դասական ըմբռնմամբ համարվում են չապահովագրվող կամ ապահովագրվող՝ պետական աջակցությամբ: Բերքի կարկտահարու-թյան ռիսկը նույնպես դժվար է կառավարվում, ելնելով այն հանգամանքից, որ իր արդյունքները խիստ տատանվում են տարեցտարի, իսկ կառա-վարման ծախսերը շատ բարձր են, որի հետևանքով վերաապահովագրումը

³ "Faisabilite d un systeme d assurances mutuelles agricoles en Armenie", GROUPAMA, 1999.

դառնում է էական և անխուսափելի: Ելնելով գործառնական մեծ ծախսերից, ապահովագրության տվյալ տեսակի կենսագործման հնարավոր տարբերակ է՝ ընկերության հանդեպ ավտոմեքենայի պարտադիր ապահովագրման պարտավորություն ստանձնած հաճախորդներին զուգահեռաբար ընձեռել հնարավորություն ապահովագրելու բերքը կարկտահարությունից: Առաջարկվող այս կոնցեպցիայի շրջանակներում, առնվազն սկզբնական ժամանակում, ապահովագրությունը կտարածվի միայն բերքի քանակի կորստի ռիսկի վրա, իսկ հետագայում այն կընդգրկի նաև բերքի /օրինակ՝ պտղի/ որակի կորստի ռիսկը: Հնարավոր տարբերակ է այս պարագայում, որ ապահովագրությունը իր մեջ ներառի որոշակի անդամավճար՝ ապահովագրվող մշակաբույսի ցանքատարածքի /այգու տարածքի/ նվազագույն թույլատրելի չափով: Գյուղատնտեսական կենդանիների անկման ապահովագրությունը /բացառությամբ համաճարակների ռիսկի/ ևս իրականանալի է: Խոսքը գնում է տարբեր պատահարների, հիվանդության կամ ապահովագրողի կողմից թույլատրված շտապ մորթի հետևանքով խոշոր եղջերավոր անասունների կորստի ռիսկի մասին: Հնարավոր է կյանքի կոչել նաև բազմառիսկ ապահովագրության պայմանագրեր անասնաբուծության այլ յուրահատուկ ճյուղերի համար: Այսպիսով, կարկտահարությունից բացի բերքը վտանգող մյուս ռիսկերը պետք է իր վրա վերցնի հատուկ այդ նպատակով ստեղծված կառույց, ինչպիսին է օրինակ գյուղատնտեսական աղետների դեմ ապահովագրության ազգային հիմնադրամը Ֆրանսիայում: Վերջինիս ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում ֆերմերական տնտեսությունների կողմից ապահովագրության պայմանագրերի ստորագրման ժամանակ գանձվող լրավճարները: Հայաստանում ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության ներմուծման դեպքում կարող է ստեղծվել նմանատիպ համակարգ: Հնարավոր է նաև բերքի կամ անասունների ապահովագրության բազմառիսկ կիսապետական համակարգի ստեղծումը, սակայն վերջինս ենթադրում է պետության կողմից մեծածավալ ֆինանսական ներդրումներ, որը սակայն այսօր Հայաստանի պետական սուղ բյուջեի պարագայում իրական չէ: Այլ խնդիր է, որ կառավարությունը միջազգային կառույցներից կամ այլ ներդրողներից ներգրավի միջոցներ:

Մյուս կողմից, կենսունակ գյուղատնտեսական ապահովագրություն ունենալու հարցում պետք է շահագրգռված լինեն նաև գյուղատնտեսությունը վարկավորող առևտրային բանկերը, քանզի տվյալ բնագավառն ազգային տնտեսության մյուս ճյուղերից ավելի շատ է զգում բնության արհավիրքների և համաճարակների ազդեցությունը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը թույլ կտա բանկերին մեծացնելու վարկավորման

ծավալները: Ներկայումս բանկերը ստիպված ավելի մեծ ուշադրություն են դարձնում խնդրահարույց վարկերի հետ վերադարձման գործընթացին, որոնք առաջացել են նաև բնական աղետների և համաճարակների արդյունքում, քան վարկավորման ծավալների մեծացմանը: Այս ոլորտում ապահովագրության համակարգի գոյությունը ամբողջովին կլուծի այս «կնճռոտ» հարցը: Այս տեսանկյունից շատ կարևոր է, որ ապագայում ստեղծվելիք գյուղատնտեսական ապահովագրության համակարգը ներկայացնող ընկերությունները (նաև ներկայումս գործող) իրենց գործունեությունը՝ ծավալեն գյուղատնտեսությունը ֆինանսավորող բանկերի և մասնավորապես "ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ" ՓԲԸ-ի հետ համատեղ: Տվյալ հարցի հետ կապված, եվրոպական փորձը ցույց է տալիս, որ ստեղծվելիք ընկերությունը նպատակահարմար է գործի կոոպերացիայի սկզբունքով /որը հնարավոր չէ իրականացնել Հայաստանում, օրենսդրությամբ նախատեսված չլինելու պատճառով: Այս դեպքում ապահովագրողները պետք է հանդիսանան միաժամանակ նաև ընկերության բաժնետերեր և ընտրովի մարմինների միջոցով կարողանան մասնակցել կառավարման գործընթացին: Տվյալ մեխանիզմը կապահովի անդամների պատասխանատվության բարձր զգացում և ապահովագրվող գույքի հանդեպ անհրաժեշտ վերահսկողություն: Եթե օրենսդրական համապատասխան փոփոխություն չարվի և վերոհիշյալ կառույցի ստեղծումը դառնա անիրականանալի, ապա կարելի է նախատեսել խնդրի լուծման այլ տարբերակներ, որոնք հիմնված կլինեն բանկային տեխնոլոգիաների վրա: Առաջարկվող տարբերակներից կարող է հանդիսանալ ներկայումս գյուղատնտեսությունը վարկավորող առաջատար բանկի՝ "ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ" ՓԲԸ-ի անդամ գյուղացիական տնտեսությունների (շուրջ 60 հազար) միջև ստեղծվելիք փոխօգնության երաշխիքային հիմնադրամը, որի միջոցները կարող են ուղղվել նաև այն վարկառուների պարտավորությունների մարմանը, որոնք տուժել են անբարենպաստ կլիմայական պայմանների կամ համաճարակների պատճառով: Այս նախագիծը ունի նաև բացասական կողմ, այն է՝ որ արդյունքում կթանկանան բանկից ստացվող գյուղատնտեսական վարկերը:

Տվյալ խնդրի ինչպիսի լուծում էլ նախատեսվի, այնուամենայնիվ բաց է մնում գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության վերաապահովագրության հարցը, որը պահանջվում է մասնավորապես արտասովոր չափերի աղետների (փոթորիկ, մեծ ավերվածություն պատճառված կարկտահարություն և այլն) ի հայտ գալու դեպքում: Վերաապահովագրումը պետք է ստանձնի իր վրա միջազգային որևէ մասնագիտացված ընկերություն, կամ տեղական կազմակերպություն՝ պետական ֆինանսական աջակցության պայմաններում: Հայաստանում գործող ապահովագրական ընկերություններից "Ինգո Արմենիա" ընկերությունը վերջին մի քանի տարում խոսում է այն

մասին, որ նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության հետ կապված պիլոտային ծրագրեր Գյուղատնտեսության ապահովագրության դեպքում չենք կարող հույս դնել միայն գյուղացիական տնտեսությունների ապահովագրավճարների վրա, իր դերակատարությունը պետք է ունենա նաև պետությունը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պետությունները մասնակցում են տարբեր չափերով, բայց ոչ պակաս քան 50%-ի չափով: Կան դեպքեր, երբ պետությունը գյուղատնտեսության ապահովագրությունում մասնակցում է 70%-80%-ի չափով: Երբ մենք հասկանանք, թե պետությունը տարեկան կտրվածքով որքան գումար է ուղղում երաշտի, ջրհեղեղների, ցրտահարությունների, կարկտի դեմ պայքարին, ապա կկարողանանք մոտավոր պատկերացում կազմել, թե ինչ չափով է նա ունակ մասնակցելու գյուղատնտեսության ապահովագրությանը: Ըստ այդ մասնակցության չափի էլ ապահովագրողները կկարողանան արդեն համապատասխան պրոդուկտներ առաջարկել⁴:

"Ինգո Արմենիա" ապահովագրական ընկերությունը իր պիլոտային ծրագրում նախատեսում է սկզբնական շրջանում ապահովագրել անասնապահության ոլորտը, միաժամանակ մշակելով նաև բուսաբուծության ոլորտի ապահովագրության պրոդուկտը: Ծրագրում չեն լինելու "ծայրահեղ անհաջող շրջաններ", որտեղ ամեն տարի կարկտահարության կամ ցրտահարության դեպքեր են արձանագրվում: Չեն լինի նաև շրջաններ, որտեղ շատ քիչ են բնական աղետների առկայությունը: Փորձ է արվելու ինչ որ սահմանափակ տարածքում, այսպես ասած՝ "գյուղատնտեսության միջին շերտում" ձևավորել ապահովագրության սակագին: Ծրագրում հաշվարկներ է կատարվել, որ եթե գյուղացիական տնտեսությունները աղետներից պաշտպանված լինեն ռիսկերը մեղմող մեխանիզմներով՝ հակակարկտային կայաններով կամ հակակարկտային ցանցերով, ապա կարկտից ապահովագրությունը կարժենա 0.5%-1%, իսկ դրանց բացակայության դեպքում՝ 5%-7%: Հաշվարկվել է նաև, որ եթե ապահովագրողը ունենա 5-7 հաջողված տարի և ստիպված չլինի հավաքագրված ողջ գումարը ուղղել ապահովագրական հատուցումներին, ապա ինքն արդեն կկարողանա միջոցներ ձեռնարկել հակակարկտային ցանցեր տեղադրելու ուղղությամբ: Գյուղացիական տնտեսությունների համար այսօր ապահովագրության գործառույթը իհարկե լրացուցիչ ֆինանսական բեռ է և եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ առկա են մեծ պարտավորություններ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հանդեպ, ապա պարզ է դառնում, որ այսօր գյուղացին դեռևս պատրաստ չէ ապահովագրության գործընթացը ներառելու իր

⁴ Գյուղատնտեսության ապահովագրության մեջ իր դերը պետք է ունենա պետությունը: "Ինգո Արմենիա"-ի գլխավոր տնօրենի հարցազրույցը ՍիվիլՆեթ-ին, 23.05.2013թ.:

գործունեությունում: Սակայն քիչ չեն նաև այն ֆերմերները, որոնք գիտակցում են (հատկապես խոշոր ֆերմերային տնտեսությունները՝ բնական աղետների և համաճարակների հետևանքով կրած և ցավոք սրտի դեռևս կրելիք լուրջ ֆինանսական վնասները: 2013թ. միայն կարկտահարության վնասը հաշվվում էր 25.3 մլրդ դրամ, 2014թ.՝ 11 մլրդ դրամ⁵: Ապահովագրությունը կարող է հնարավորություն ստեղծել նաև վարկային միջոցների էժանացման համար: Գյուղատնտեսության բարձր ռիսկային ոլորտ համարվելու պատճառով, վարկային միջոցների տոկոսները այսօր ՀՀ-ում համեմատած զարգացած երկրների հետ բարձր են: Ապահովագրությունը ֆինանսավորող կառույցներին հնարավորություն կընձեռի երկարաժամկետ կանխատեսումներ կատարել, առանց մտավախության, թե կարկուտ լինի կամ երաշտ, ծրագրեր իրականացնել, մասսայական վարկավորում իրականացնել, որի արդյունքում հնարավոր կլինի վարկավորման տոկոսադրույքն իջեցնել: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության հետ կապված առաջարկվում են տարբեր նախագծեր, որոնցում "կարմիր թելի" պես անցնում է պետության կողմից անհրաժեշտ աջակցության գաղափարը:

Կա առաջարկ, որ գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվի Ավտոապահովագրության բյուրոյի միջոցով, դրա կազմում ստեղծելով մի կառույց որը, կգբաղվի գյուղատնտեսության ապահովագրությամբ: Փորձնական ծրագրի ավարտից հետո, կախված արդյունքից, նոր այդ կառույցը կառանձնանա: Այս պիլոտային ծրագրի շրջանակում պարտադիր ապահովագրություն է ենթադրվում գյուղացիական վարկեր վերցրած գյուղացիների համար, իսկ մնացածի դեպքում այն կլինի կամավոր սկզբունքով: 2017թ. սկսվելու է համապատասխան պիլոտային ծրագրի մշակումը: Այն ֆինանսավորվելու է նախնական համաձայնություններով՝ KFW-ի և ՀՀ կառավարության միջոցների հաշվին՝ ուղղված լինելու շահութաբեր տնտեսությունների ապահովագրությանը: Առաջին փուլում համատարած գյուղատնտեսական հաշվառման արդյունքների հիման վրա տարբերակվելու են փոքր, միջին և խոշոր տնտեսությունները, ըստ այս կատեգորիաների էլ որոշվելու են սուբսիդավորման ձևաչափերը: Ապահովագրությունն իրականացվելու է 5 հիմնական ռիսկերի գծով՝ կարկտահարություն, ցրտահարություն, երաշտի, հողմի և ջրհեղեղի: Քննարկման գործընթացում է նաև այն հարցը, թե որ մշակաբույսերի համար են մշակվելու ապահովագրական պրոդուկտները: Ապահովագրությունն իրականացվելու է հետևյալ սխեմայով՝ մշակվելու է ապահովագրական գործիք, որը վաճառվելու է ապահովագրական ընկերությունների կողմից: Վերջիններս վերաապահովագրելու են

⁵ Գյուղատնտեսության ոլորտում շուտով ապահովագրության պիլոտային ծրագիր է իրականացվելու, հեղինակ Լալա Տեր Ղազարյան, 12.07.2016թ., հարցազրույց Panorama.am-ի հետ Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հրաչյա Ծանեցյան:

իրենց ռիսկերը: Լինելու է նաև միջնորդ կառույց, որը գնահատելու է ապահովագրական դեպքերի հետևանքով առաջացած կորուստները: Միաժամանակ, մշակված գործիքը լինելու է այնպիսին, որ ապահովագրական ընկերության համար լինի գրավիչ, գյուղացու համար՝ մատչելի, իսկ տարբերությունը սուբսիդավորվելու է: Ծրագիրը սկզբում լինելու է պիլոտային, նախապատրաստական աշխատանքները, այդ թվում՝ օրենսդրական, նախատեսվում են 2017թ. վերջ - 2018թ. սկիզբ: Ասվածից հետևում է, որ գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը լիովին կենսագործելի է որոշ պարտադիր պայմանների ապահովման պայմաններում, որոնցից են ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունը (իրագործվել է), գյուղատնտեսական և գյուղական ապահովագրության համատեղումը և վերաապահովագրության հուսալի համակարգի ստեղծումը: Ակնհայտ է, որ վերջին շրջանում նկատելիորեն զարգացում են ապրում գյուղատնտեսական ռիսկերի կանխարգելման տեխնոլոգիաները: Ըստ էության ոռոգելի երկրագործության պայմաններում գրեթե վերացել է երաշտի ռիսկը, հակակարկըտային կայանքների կիրառմամբ մասամբ փոքրացել է կարկտահարության ռիսկը, իսկ հակակարկտային ցանցերի կիրառությունը առավել արդյունավետ լուծում է տալիս խնդիրն:

Դեռևս մասսայական կիրառություն չեն գտել, սակայն փորձարկվում են նաև պտղատու այգիներն ու շ գարնանային ցրտահարությունից պաշտպանելու տեխնոլոգիաները: Բանջարաբուծության մեջ գնալով ամրապնդվում է վաղ գարնանը ծիլարձակման, թփակալման, ծաղկման ու պտղի ձևավորման սկզբնական փուլում պոլիէթիլենային թաղանթների տակ բույսերի աճեցման գործելակերպը: Այդ թաղանթները լայնորեն կիրառվում են նաև բանջարաբուստանային մշակաբույսերի թմբերն ու ակոսները ծածկելու համար, որը մի կողմից նպաստում է ոռոգման ջրի խնայողությանը ու մոլախոտերի վերացմանը, իսկ մյուս կողմից՝ բերքի ապրանքային տեսքի պահպանմանն ու փտախտային հիվանդությունների կանխարգելմանը: Գյուղատնտեսության համար ուղղակի հեղափոխական նշանակություն ունի բերքի ստացման ավտոմատ կառավարման համակարգի ներդրումը: Վերջինս հնարավորություն է ստեղծում ամբողջ վեգետացիայի շրջանում համակարգչային հատուկ ծրագրով հետևել բույսերի աճին ու զարգացմանը, ցուցանիշների որոշակի համակարգի օգնությամբ ավտոմատ կարգավորել՝ ոռոգման, պարարտացման, բուժման և այլ գործողությունները: Ներկայումս այս համակարգը իր կիրառությունն է գտել նոր տեխնոլոգիաներով հագեցված ջերմատնային տնտեսություններում, բայց որոշակի գործընթացներ /խոնավության ավտոմատ կարգավորում, սնուցում, բուժում և այլն/ իրականացվում է նաև դաշտային պայմաններում: Իհարկե, Հայաստանում այս տեխնոլոգիաների մասսայական կիրառումը զգալիորեն կբարձրացնի գյուղատնտեսության ապա-

հովազրական շուկայի գրավչությունը, սակայն մինչ այդ անհրաժեշտ է ձեռնարկել ագրոապահովագրության թեկուզ փորձնական, անցումային ծրագրեր, որոնց իրականացման ելակետը պետք է լինի պետության և մասնավոր հատվածի համագործակցության սկզբունքը : Այս հիմնախնդրի լուծման առավել արդյունավետ և ընդունելի տարբերակը ռիսկերի ապահովագրությունն է: Համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծումը ներառված է ՀՀ Կառավարության ծրագրում: ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. Կայուն զարգացման ռազմավարությամբ ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման աջակցությունը և փուլային մոտեցմամբ իրագործումը դիտարկվել է որպես գյուղատնտեսության ռիսկերի մեղմման կարևորագույն գործոն⁶: Պետք է փաստել, որ մշակաբույսերի և բազմամյա տնկարքների ապահովագրությունը ագրոապահովագրության առանձնահատուկ բարդություն պարունակող՝ իրականացման տեսանկյունից դժվարին և աշխատատար ապահովագրության ձև է: Բարդությունը կայանում է ոչ միայն բնական աղետների հետևանքների առավել մեծ չափերով ազդեցությունը, այլ նաև ռիսկերի հստակ տարանջատումը և վնասների չափերի որոշումը, ինչպես նաև պատճառների որոշման բարդությունները: Ակնկալվելիք բերքի չստացման պատճառ կարող է հանդիսանալ ոչ միայն տվյալ ռիսկի ի հայտ գալը /օրինակ՝ կարկուտը կամ այլ երևույթ/, այլև այլ ռիսկերի՝ համաճարակների, հիվանդությունների, կրծողների և այլն կամ մարդկային գործոնով պայմանավորված՝ ցանքատարածությունների ու այգիների ոչ պատշաճ մշակումը կամ ագրոտեխնիկական համապատասխան կանոնների չպահպանումը: Մշակաբույսերի և բազմամյա տնկարքների ապահովագրության դեպքում կարևոր խնդիրներից է նաև ապահովագրական գումարի որոշումը: Այն տարբեր մշակաբույսերի դեպքում տատանվում է տվյալ հողակտորի միջին բերքատվության 50-90%-ի սահմաններում, իսկ միջին բերքատվության հաշվարկի համար հիմք են ընդունում վերջին տարիների տվյալ հողակտորից ստացված բերքատվությունը:

Գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղնշանակության շենք-շինությունների ապահովագրությունը ևս ունի իրականացման առումով բարդություններ, սակայն ապահովագրության այս տեսակները բնույթով նման են գույքի ապահովագրությանը և մեծ դերակատարում ունի սուբյեկտիվ գործոնը: Հատկապես կենդանիների ապահովագրության դեպքում առաջանում են խնդիրներ, որոնք կապված են ճշգրիտ հաշվառման, դրանց կորստի պատահարն ապահովագրելու հետ:

⁶ Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները ՀՀ-ում: Սամվել Ավետիսյան և այլք, Երևան, Տնտեսագետ հրատարակչություն, 2017թ

Նշված ագրոապահովագրության ենթատեսակների պարագայում ապահովագրական գումարները սահմանելիս հիմք է ընդունվում շուկայական արժեքները: Գյուղատնտեսության բնագավառի ապահովագրության ռիսկերի վերլուծության ժամանակ ամբողջական պատկերացում չի կազմվի, եթե շեշտադրումը դրվի միայն բնակլիմայական ռիսկերի վրա և ուշադրությունից դուրս մնան ֆինանսական և շուկայական ռիսկերը՝ գնային և արժույթային տատանումները, ֆինանսավորման ծախսերը և շուկայի հասանելիության խնդիրները, այն գործոնները, որոնք ուղղակիորեն կապված են ֆերմերների կրած վնասների գնահատման հետ կապված մեծ ծախսերի, բարոյական վտանգի բարձր ռիսկի, ապահովագրության ծառայության դեռևս ցածր պահանջարկի, կենդանիների անկման վերաբերյալ սուբյեկտիվ մոտեցման՝ անվստահելի և սահմանափակ տվյալների ներկայացման և այլնի հետ: Գյուղացիական տնտեսությունների վարկավորման ծավալների ավելացումը թե էքստենսիվ և թե ինտենսիվ ուղղություններով, վարկավորման պայմանների բարելավումը ուղիղ համեմատական է ոլորտի ապահովագրական համակարգի ներդրմանը: Բազմիցս խոսվում է այն մասին, որ ներկայումս Հայաստանյան առևտրային բանկերը, որոնք սպասարկում են գյուղատնտեսության ոլորտը (հիմնականում՝ "ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ" ՓԲԸ-ն) լուրջ դժվարությունների են հանդիպում գյուղացիական տնտեսությունների վարկավորման ժամանակ՝ կապված հիմնականում բնակլիմայական, ինչպես նաև այլ տիպի ռիսկերի պատճառով վարկերի հետ վերադարձելիության խնդիրների ուղղությամբ: Տարիներ շարունակ կրկնվող կարկտահարությունները, երաշտը և այլ արհավիրքները լուրջ դժվարություններ են ստեղծել Հայաստանյան գյուղացիական տնտեսությունների (հիմնականում Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզեր) համար: Զրկվելով ակնկալվող բերքից՝ ֆերմերները կամ չեն կարողանում վճարել իրենց վարկային պարտավորությունները, որի արդյունքում հաճախ խնդիրը լուծվում է դատական կարգով կամ մեկ այլ ֆինանսական հաստատությունից ընտանիքի այլ անդամի անունով վարկեր են ստանում և վճարում վարկը՝ վարկով, որի արդյունքում ավելի շատ են խրվում պարտքերի մեջ: Երբեմն էլ խնդիրը լուծվում է ծայրահեղ մեթոդներով՝ վաճառելով տունը, հողը կամ շարժական գույքը: Խնդիրն էլ ավելի բարդանում է, երբ առկա են երաշխավորողներ, որոնք նման իրավիճակում համապարտ պատասխանատվություն են կրում վարկառուի հետ միասին վարկատու կազմակերպության առջև: Ստեղծված իրավիճակի բարդությունը կայանում է ոչ միայն նյութական, ֆինանսական պատասխանատվության հետ կապված, այլև խնդիրն ունի լուրջ բարոյական կողմ՝ վարկառուն և երաշխավորողները երբեմն սերնդե-սերունդ դառնում են թշնամիներ: Քանի որ, ելնելով սոցիալական ծանր վիճակից, գյուղական համայնքներում /և ոչ միայն գյուղական/ գրեթե բոլոր գյուղացիները ընկղմվել են վարկերի մեջ և

հաճախ լիկվիդային գրավների բացակայության և վարկի ստացման ժամանակ նոտարական գրասենյակներում և անշարժ գույքի կադաստրում կատարվելիք ծախսերից խուսափելու նպատակով վարկերի ապահովման միջոց են հանդիսանում երաշխավորությունները (շատ հաճախ մինչև երեք երաշխավորություն), ապա պարզ է դառնում ամբողջ համայնքի մասշտաբով, որքան մարդ է ներգրավվում այդ խնդրահարույց պրոցեսում: Արդյունքում վարկատու կազմակերպությունների համար դժվարանում է և փոքրանում պոտենցիալ վարկառուների քանակությունը, որի շղթայական ազդեցությունը տարեցտարի կրճատում է վարկավորման ծավալները:

Վարկատու կազմակերպությունները խնդրի ժամանակավոր լուծումը տեսնում են գյուղացիական տնտեսությունների վերաֆինանսավորման մեջ, որը ֆերմերներին դատի տալու գործընթացից խուսափելու ծայրահեղ միջոց է, որովհետև այդ դեպքում վարկատու կազմակերպությունները ստիպված են լինում վերաֆինանսավորվող վարկերը դասակարգել և արդյունքում կրում են մեծ վնասներ: Իհարկե վերավարկավորվող գյուղացիական տնտեսությունների մի մասը /շատ փոքր մասը/ այդ ընթացքում առողջանում են և կարողանում են խուսափել տնտեսության համար հետագա կործանարար գործընթացներից, իսկ մնացած տնտեսությունները, ավելի մեծացնելով վարկային բեռը, այնուամենայնիվ որոշ ժամանակ անց հայտնվում են դատարանում: Բնականաբար նման իրավիճակը ձեռնտու չէ ինչպես գյուղացիական տնտեսություններին, այնպես էլ վարկատու կազմակերպություններին:

Եզրակացությունը մեկն է՝ գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության գործընթացի իրականացումը լավագույն լուծումը կհանդիսանա ստեղծված իրավիճակում առկա խնդիրների լուծման ճանապարհին և գյուղատնտեսությունը ֆինանսավորող կառույցների համար կստեղծվի նպաստավոր իրավիճակ և բարենպաստ միջավայր մասշտաբային և գյուղացիական տնտեսությունների համար ձեռնտու պայմաններով վարկավորում իրականացնելու համար:

Սուրեն ԴԱՎԹՅԱՆ

Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը որպես վարկավորման արդյունավետության բարձրացման գործոն

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, ապահովագրություն, գյուղատնտեսության վարկավորում, պարենային անվտանգություն

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանում գյուղատնտեսության վարումը մեծապես պայմանավորված է ռիսկի գործոնով և հաշվի առնելով ճյուղի առանցքային նշանակությունը ազգային տնտեսության զարգացման, երկրի կենսագործունեության և պարենային անվտանգության ապահովման, բնակչության ընդհանուր կենսամակարդակի բարձրացման գործում, առանձնահատուկ նշանակություն է ստանում ագրարային ոլորտում իրականացվող պետական քաղաքականության կարևոր նպատակներից մեկի՝ հստակ մեխանիզմներ ունեցող ապահովագրական համակարգի ստեղծումը: Մարդիկ տարբեր գործոններով պայմանավորված, ապահովագրում են գրեթե ամեն ինչ՝ կյանքը, սեփականությունը, գույքը և այլն՝ ներդնելով ֆինանսական զգալի միջոցներ, գիտակցելով դրա անհրաժեշտությունը և գնահատելով ապագայում հնարավոր ռիսկի գործոնը:

Сурен ДАВТЯН:

Страхование сельскохозяйственного сектора как фактор повышения эффективности кредитования

Ключевые слова: сельское хозяйство, страхование, сельскохозяйственное кредитование, продовольственная безопасность

Принимая во внимание тот факт, что сельское хозяйство в Армении в значительной степени обусловлено фактором риска и с учетом главного значения отрасли в развитии национальной экономики, средств к существованию и продовольственной безопасности страны, общего уровня жизни населения имеет особое значение для одной из важных целей государственной политики в аграрном секторе, создание страховой системы с четкими механизмами. Люди страхуют практически все, жизнь, собственность, собственность и т. д., вкладывая значительные средства в финансы, понимая необходимость и оценку потенциального фактора риска в будущем.

Suren DAVTYAN:

Insurance in the agricultural sector as a factor in crediting effectiveness

Key words: agricultural production, insurance, agricultural crediting, food security

The fact is that the state of the economy in Armenia is characterized by the fact that the jmain factor is the development of the national economy, the establishment of a security and prosperity of the country, as well as the quality of life strongly depend on efficient state policy in the agrarian sector, creating insurance schemes with the cutting edge systems. People insure practically all, life, personality, personality, etc. g., incl meaningful tools in the finances, understanding the potential and the potential risk factor in the future.